



Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Վարկի անվանում, նպատակ,արժույթ	<<ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> Բնակելի տան կամ բնակարանի էներգաարդյունավետ ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում, << կառավարության 15.04.2022թ-ի թիվ N 520-L որոշմամբ հաստատված՝ Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում
Վարկի նվազագույն - առավելագույն գումարներ	1.000.000 - 10.000.000 << դրամ, Ծրագրով հաստատված սահմանաչափերի համաձայն
Վարկի առավելագույն ժամկետ	7 տարի
Տարեկան անվանական տոկոսադրույքի չափ, տեսակ	15,7-16,7%, հաստատուն Վերը նշված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները մասնակի սուբսիդավորվում են պետական աջակցությամբ, Ծրագրով սահմանված չափերով (9-14%-ը):
Տարեկան փաստացի տոկոսադրույք	1,98 - 8,43%

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! Վարկի տոկոսները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը՝ տոկոսագումարները և վարկի տրամադրման (այդ թվում՝ երրորդ անձանց վճարվող) և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի կարգը կարող եք գտնել մեր կայքում, հեղուկալ հղմամբ՝ <http://bless.am/wp-content/uploads/documents/thash.pdf>

Վարկի տրամադրման հետ կապված Ընկերության կողմից սահմանված ծառայության վճարներ	Առկա չեն
Վարկային պարտավորությունները չկատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոցներ	Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում – տարեկան 24% Տոկոսագումարը չվճարելու դեպքում – օրական 0,13%
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում վարկառուի ընտրությամբ՝ ա/վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցվում է ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետին անփոփոխ, կամ բ/նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:

Ամփոփագրի հրապարակման ամսաթիվը՝ 18.12.2023թ. Ամփոփագրում նշված պայմանները Ձեր դիմելու օրվա դրությամբ կարող են փոփոխված լինել: Մանրամասների և վարկի ամբողջական պայմանների համար դիմեք Ընկերության վարկային մասնագետին՝ /010/22-52-52 հեռախոսահամարով, info@bless.am էլ. հասցեով կամ Ընկերության տարածքում:

Ընկերությունը պարտավոր է 7 օր առաջ տրամադրել Ձեզ վարկի առաջարկը, ընձեռելով Ձեզ 7 օր մտածելու ժամանակ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ !

- Ձեր կողմից պարտավորությունները (այդ թվում՝ սահմանված ժամկետներում վարկի գումարը և տոկոսագումարը չմարելու) չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Գրավի առարկա գույքը կարող է Օրենքով սահմանված կարգով բռնագանձվել և իրացվել.
- Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկի պարտքը չծածկելու դեպքում պարտքի մնացած գումարը կարող է մարվել Ձեր այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին.
- Ձեր կողմից պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ տվյալները ուղարկում է Վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմությունը: Վաղ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Վարկի ապահովման միջոցներ

Գրավ՝ անշարժ կամ շարժական գույք, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան:
Գրավի առարկա կարող է հանդիսանալ ինչպես վարկի գումարով վերանորոգվող, այնպես էլ այլ գույք:
Որոշ դեպքերում կարող են պահանջվել վարկի երաշխավորներ:

Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցություն

75%- անշարժ գույքի դեպքում
55%- այլ գույքի դեպքում

Վարկի ստացման, այդ թվում՝ գրավադրման հետ կապված ծախսեր, որոնք ենթակա են վճարման երրորդ անձանց

Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, անշարժ գույքի գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Շարժական գույքի գրավադրման դեպքում գույքը ենթակա է պետական գրանցման, իսկ կողմերից մեկի պահանջի դեպքում՝ նոտարական վավերացման և ապահովագրման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից: Վերը նշված ծախսերի արժեքները ներկայացված են մեր կայքում, հետևյալ հղմամբ՝ <http://bless.am/wp-content/uploads/documents/cax.pdf>

Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակ

Վարկի մարման եղանակ – ամենամսյա հավասարաչափ (անուիտետային) Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա

Վարկի տրամադրման եղանակներ

Միանվագ կամ փուլային, անկանխիկ

Պարտքի գանձման հերթականություն

Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար

Քաղվածքների տրամադրման կարգ ու ժամկետներ

Վարկի քաղվածքները տրամադրվում են անվճար, ամսական պարբերականությամբ, հաճախողի նախընտրած եղանակով

Հաճախորդի հետ հաղորդակցման կարգ

Հաճախորդի ընտրությամբ՝ փոստով, էլ.փոստով, Ընկերության գրասենյակում: Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է Ձեզ 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն

Վարկի ձևակերպման վայր

Ընկերության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր

Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ

Վարկի տրման (մերժման) որոշման կայացման ժամկետ – 2 աշխատանքային օր /պահանջվող ամբողջ փաստաթղթերը ներկայացնելուց հետո/,
Որոշման մասին Հաճախորդին տեղեկացնելու ժամկետ – 1 աշխատանքային օր /որոշման կայացումից հետո/,
Վարկը տրամադրելու ժամկետ - 5 աշխատանքային օր /հաճախորդի կողմից վարկի պայմաններին համաձայնելուց հետո/

<p>Վարկի տրամադրման դրական գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացված հայտը համապատասխանում է Ընկերության և Ծրագրով սահմանված պայմաններին ու պահանջներին, - վարկառուի վարկունակության վերլուծության դրական արդյունքը, - Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային պատմությունն ու վարկային ծանրաբեռնվածությունը, - Ընկերության համար ընդունելի է վարկի ապահովման միջոցը
<p>Վարկի մերժման գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին - վարկառուի վարկունակության վերլուծության բացասական արդյունքը - հաճախորդի բացասական վարկային պատմությունը - հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով - Ընկերության համար ընդունելի չէ վարկի ապահովման միջոցը - վարկի իրական շահառուն այլ անձ է - հաճախորդը Ծրագրի շրջանակներում ունի այլ ֆինանսական կառույցից ներգրավված վարկ
<p>Պահանջվող նվազագույն փաստաթղթեր, դրանց ներկայացման կարգ ու ժամկետներ</p>	<ul style="list-style-type: none"> - Հաճախորդի և իր ընտանիքի անդամների անձնագիր և ՀԾՀ կամ նույնականացման քարտ, ամուսնական կարգավիճակը հիմնավորող փաստաթուղթ, -Վերանորոգվող գույքի սեփականության վկայական և լուսանկարներ, -մինչև 2010թ-ը կառուցված գույքի դեպքում՝ լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն (ոչ ավելի, քան 10 տարվա վաղեմության)՝ 4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ, - Հաճախորդի եկամուտը հիմնավորող փաստաթղթեր, -Հաճախորդի և իր ընտանիքի անդամների վարկային պատմությունը նկարագրող փաստաթղթեր, -Վերանորոգման աշխատանքների նախահաշիվ, ներառյալ աշխատանքների իրականացման ժամկետները, - Վարկի օգտագործումը հիմնավորող փաստաթղթեր, - Գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր, -Վարկի գծով երաշխավորի և/կամ համավարկառուի առկայության դեպքում՝ համավարկառու կամ երաշխավոր հանդիսացող անձի հետ կապված փաստաթղթեր:

Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը հաճախորդին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ի»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՁ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՁ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից